ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5-7-Ը ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. <u>ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ</u>

Արմեն Ղազարյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>

ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

Պրահա, Չեխիայի Հանրապետություն, 2020թ. փետրվարի 5-7

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>

ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման երկխոսությանն ուղղված պատվիրակության կազմում (պատվիրակության ղեկավար)

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)</u>

Չեխական կողմի հետ վիզաների ազատականացման երկխոսության հնարավոր մեկնարկին ընդառաջ բանակցությունների անցկացում

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>

Այցի ընթացքում կայացած հանդիպումների քննարկման հիմնական թեմաներն էին ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման երկխոսության հնարավոր մեկնարկը և այս համատեքստում ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի իրականացման ընթացքը: Ռեադմիսիոն համաձայնագրի իրականացման լիազոր մարմինը հայկական կողմից Միգրացիոն ծառայությունն է:
Միգրացիոն ծառայության իրավասությունների ոլորտի քննարկման հիմնական թեմաներն առնչվում էին ռեադմիսիոն էլեկտրոնային համակարգի գործարկմանը, անձանց նույնականացման խնդիրներին: Չեխական կողմի հետ քննարկվել են նաև տրանզիտ վիզային առնչվող խնդիրներ:

7. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>

ՀՀ միջգերատեսչական պատվիրակությունը (պատվիրակության ղեկավար՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ Արմեն Ղազարյան, անդամներ՝ ՀՀ-ում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի պետ, ոստիկանության գնդապետ Արա Ֆիդանյան, ՀՀ ԱԳ նախարարի խորհրդական Դավիթ Սարգսյան, ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության պետ Տիգրան Սամվելյան) հանդիպում է ունեցել Չեխիայի ներքին գործերի նախարարի տեղակալ Յակուբ Կուլիանեկի հետ: Չեխական կողմից հանդիպմանը մասնակցել են նաև ՆԳՆ Ապաստանի և միգրացիոն քաղաքականության վարչության պետ Պավլա Նովոտնան և Միջազգային համագործակցության և ԵՄ վարչության պետ Բոհումիլ Հնիդեկը, ինչպես նաև ԱԳՆ Մուտքի արտոնագրերի վարչության երկու աշխատակիցներ: Կողմերը քննարկել են ՀՀ-ԵՄ Մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսությունը սկսելու հնարավոր ուղիները, ինչպես նաև անդրադարձել են ՀՀ քաղաքացիների կողմից Չեխիայում ապաստան հայցելու դեպքերին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև Հետընդունման համաձայնագրի առավել արդյունավետ կիրարկման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու վերաբերյալ:

Չեխիայի ԱԳՆ-ում հայկական պատվիրակությունը հանդիպում է ունեցել Չեխիայի ԱԳՆ փոխնախարարի տեղակալ, մուտքի արտոնագրերի վարչության պետ Դավիդ Նովիի հետ: Չեխական կողմից հանդիպմանը ներկա է գտնվել նաև ԱԳՆ՝ Հայաստանի համար պատասխանատու աշխատակիցը:

Կողմերը քննարկել են երկու երկրների միջև ներկայումս գործող արտոնագրային ռեժիմին առնչվող մի շարք հարցեր, խոսեցին առկա խնդիրներից և դրանց հաղթահարման հեռանկարներից:

Այցի շրջանակներում տեղի է ունեցել նաև հանդիպում, որի շրջանակներում ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության պետ Տիգրան Սամվելյանին ընդունել է Չեխիայի ԱԳՆ՝ ԱլԳ հարցերով հատուկ բանագնաց Յարոսլավ Կյուրֆյուրստը: Զրուցակիցները մտքեր են փոխանակել ԱլԳ ապագայի վերաբերյալ կողմերի ունեցած տեսլականի և առաջնահերթությունների վերաբերյալ, ինչպես նաև իրենց գոհունակությունն են հայտնել հայ-չեխական երկկողմ հարաբերությունների լայն օրակարգի և կողմերի միջև համագործակցության բարձր մակարդակի առնչությամբ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել առավել արդյունավետ կերպով կիրառել ՀՀ-ԵՄ հետընդունման համաձայնագիր՝ միաժամանակ շեշտը դնելով կամավոր վերադարձի խրախուսման վրա: Չեխական կողմը նշել է, որ սկզբունքային առարկություններ չունի ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկի առումով: Վերադարձի և անօրինական միգրացիայի դեմ պայքարի ոլորտում խնդիրներ առաջանալու

դեպքում կողմերը պայմանավորվել են դրանք լուծել աշխատանքային կարգով քննարկումների արդյունքում:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջարկվում է վիզաների ազատականացման մեկնարկին ուղղված գործընթացի աշխատանքները կազմակերպել առավել համակարգված ձևով, որի առնչությամբ համապատասխան առաջարկությունը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

11 փետրվարի 2020թ.